ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-28-Ն-10
2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 9-Ի ԹԻՎ ԲԴԽ-23-Ն-1 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասով, 27.1-ին հոդվածի 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հուլիսի 9-ի թիվ ԲԴԽ-23-Ո-48 որոշմամբ՝ Բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հուլիսի 9-ի ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով չսահմանված Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի դատարանների նստավայրերը, նստավայրերի սպասարկման տարածքները սահմանելու, դատավորների՝ ըստ նստավայրերի և մասնագիտացման բաշխումն ու թվակազմը հաստատելու մասին» թիվ ԲԴԽ-23-Ն-1 որոշումը լրացնել 1.1-ին կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Հաստատել Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորների՝ ըստ մասնագիտացման բաշխումն ու թվակազմը՝ համաձայն հավելված 3-ի»՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Գ. ՋՀԱՆԳԻՐՅԱՆ

2021թ. մայիսի 3
ք. Երևան

Հավելված
Բարձրագույն դատական խորհրդի
2021թ. մայիսի 3-ի թիվ ԲԴԽ-28-Ն-10
որոշման

«Հավելված 3
Բարձրագույն դատական խորհրդի
2018թ. հուլիսի 9-ի թիվ ԲԴԽ-23-Ն-1
որոշման

ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԲԱՇԽՈՒՄՆ ՈՒ ԹՎԱԿԱԶՄԸ

	Դատավոր	**Մասնագիտացում**
1.	Բարսեղյան Նարինե	Քաղաքացիական
2.	Գաբրիելյան Նարեկ	Քաղաքացիական
3.	Գրիգորյան Լևոն	Քաղաքացիական/ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ գործեր/
4.	Ենոքյան Հարություն	Քաղաքացիական
5.	Թորոսյան Սլավիկ	Քաղաքացիական
6.	Խանդանյան Գագիկ	Քաղաքացիական
7.	Խառատյան Աստղիկ	Քաղաքացիական
8.	Կարապետյան Նորա	Քաղաքացիական
9.	Հարթենյան Մարգարիտա	Քաղաքացիական
10.	Համբարձումյան Կարեն	Քաղաքացիական/ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ գործեր/
11.	Մարգարյան Նաիրա	Քաղաքացիական
12.	Մխիթարյան Անի	Քաղաքացիական
13.	Նազարյան Տարոն	Քաղաքացիական

14.	Չիլինգարյան Կարեն	Քաղաքացիական/ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ գործեր/
15.	Պետրոսյան Ամրահի	Քաղաքացիական
16.	Սերոբյան Դավիթ	Քաղաքացիական
	Ընդհանուրը՝ 16 դատավոր	

»: